ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-Միջառարկայական և ներառարկայական կապերը պատմության դասավանդման գործընթացում:

ՂԵԿԱՎԱՐ պ.գ.թ. – Կարինե Ոսկանյան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ - Հայկանուշ Եղիազարյան

Պատրաստ է պաշտպանության-14.10.2022

Աշտարակ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Միջառարկայական կապերի դերը դասավանդման գործընթացում …….8

Գլուխ 2.Ներառարկայական և միջառարկայական կապերի կիրառումը պատմության դասավանդման ընթացքում……9

Եզրակացություն……15

Օգտագործված գրականության ցանկ……..16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը: ՈՒսուցման մեթոդները, ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովելու ուսուցչի առջև դրված այս խնդիրները, ուստի ուսուցիչը պետք է տեղյակ լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և կարողանա դրանք ճիշտ կիրառել:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել միջառարկայական և ներառարկայական կապերի կիրառումը պատմության դասաժամերին, բացահայտել դասավանդման արդյունավետության բարձրացման ճանապարհները միջառարակայական կապերի կիրառման միջոցով: Թեման արդիական է, քանի որ գիտելիքի վերաբերյալ աշակերտի մոտ ամբողջական և խորքային պատկերացում ձևավորելու համար անհրաժեշտ է դասավանդել համընդհանուր գաղափարների և հասկացությունների միջոցով: Այս գաղափարը կարևորվում է նաև հանրակրթական և առարկայական նոր չափորոշիչներում[1]:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են միջառարկայական կապերի նպատակային կիրառումը պատմության դասաժամերին, դրանց միջոցով աշակերտների երևույթների և հասկացությունների ընկալման խորացումը:

ՈՒսուցման բազմաթիվ մեթոդների շարքում կարևոր են միջառարկայական և ներառարկայական կապերի կիրառումը դասավանդման գործընթացում:

Միջառարկայական կապերը, արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների և գործընթացների փոխկապակցությունները, էական դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման և ընդհանուր-ուսումնական կոմպետենտությունների ձևավորման գործընթացում. դրանք հնարավորություն են տալիս որևէ ուսումնական առարկայի ուսուցման արդյունքում կազմավորված կարողությունները, հմտությունները փոխանցել այլ առարկաների բնագավառ: Դիդակտիկայի տեսակետից՝ միջառարկայական կապերի իրագործումը որոշակիորեն բարձրացնում է ուսուցման գիտական մակարդակը, նպաստում՝սովորողների կողմից նյութի յուրացմանը: Բացի այդ, միջառարկայական կապերի բազմակողմանի իրագործումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

առարկաների համախմբի ուսուցման գործընթացը և, դրանով իսկ, կրճատել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը[2]:

Ժողովրդի պատմությունը նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսումնասիրությունը կարևոր է յուրաքանչյուր քաղաքացու համար, այն հասարակության և պետության ապագա գործունեության հիմքն է:

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ :

Փյունիկի պես վերածնվող հայ ժողովուրդը ցեղասպանությունից ընդամենը երեք տարի անց դժվարին պայմաններում ստեղծեց պետականություն ու փոխանցեց մեզ: Ուստի, 21-րդ դարի տեխնոլոգիական ռեսուրսները հնարավորություն են ընձեռում արագ ինքնակազմակերպվել: Միաժամանակ անհրաժեշտ է ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ սերտել այլևս պատմություն դարձած այս պատերազմի դասերը, այն պայմանով, որ չպետք է թերագնահատել թշնամուն և խույս տալ իրականությունից:

Թե ներկայիս պատերազմական իրավիճակը և թե նախորդ պատերազմները մեզ ցույց են տվել,որ հայ ժողովրդի և Հայաստանի միակ հույսն ու ապավենը հայ զինվորն է,իսկ անձնազոհ և հայրենասեր անձ ձևավորվում են հենց դպրոցական տարիներին:Ներկայումս յուրաքանչյուր զինվոր իր արյան գնով է գրում հայոց պատմության հաջորդ էջը:Գալիք օրը իր հետ բերում է նոր արհավիրքներ և նոր պատերազմներ,բայց հայը ունի անկոտրուն կամք և նախնիներից ժառանգած մի ափաչափ հողատարածք,որը պահելու համար չի խնայում սեփական կյանքը:

Ամուր սահման և հիմք ունի այն պետությունը,որի յուրաքանչյուր զավակ գիտի իր պատմությունը:Հայոց պատմությունը իր անցած ճանապարհով առաջնակարգ դեր ունի հայ մարդու՝ որպես լիարժեք քաղաքացի և հայրենասեր զինվոր,ձևավորման

[2] Մանուկյան Ս. Մանկավարժական և աշակերտական դասանպատակները. Երևան 2003թ., էջ 25:

գործում:Լավ հասկանալով այդ գործոնի նշանակությունը՝ անհրաժեշտ է մշակել պատմության դասավանդման նոր մարտավարություն և շարժվել նոր պահանջներով: Մեր կրթական համակարգում թիրախային է լինելու որակի բարձրացման պահանջը: Ստեղծված իրավիճակում հաջորդ առաջնահերթ նպատակը պետք է դառնա գիտելիքահեն տնտեսության ձևավորումը, որը հնարավորություն կտա մեր ունեցած գիտական ներուժը պահել ու ծառայեցնել ի շահ հայրենիքի:

ԵՎ ի վերջո կա մի ճշմարտություն՝ զենքի ուժով ձեռք բերված հաղթանակները պահվում են միայն ճկուն դիվանագիտության, հզոր պետության և դիմակայուն տնտեսության ձևավորմամբ:

Զարգացնելով մեր ուսուցման համակարգերը,ձևավորելով բարձր մակարդակ ունեցող ուսումնական հաստատություններ,ունենալով վորակյալ և հմուտ մասնագետներ մենք փրկում ենք ինքներս մեզ,փրկում ենք երկիրը կործանման ճանապարհից, փրկում ենք անկիրթ և խավարամիտ հասարակությանը և լույս սփռում այնտեղ,որտեղ տիրում է տգիտությունն ու չիմացության քաոսը: Դասավանդման որակի բարձրացմանը մեծապես նպաստում են միջառարկայական կապերի կիրառումը, ինչը ապահովում է սովորողների մտածողության զարգացումը:

Դպրոցական դասընթացում աշակերտների կրթական և դաստիարակչական մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ արդյունավետ ուղիների ընտրությունը գտնվում է բոլոր ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Դպրոցում կրթությունն ուղղված է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակմանը: Դրա իրականացման գործում առկա են բազմաթիվ միջոցներ և մեթոդներ, որոնցում էական են միջառարկայական կապերի ստեղծումը:

Գլուխ 1. Միջառարկայական կապերի կիրառումը դասավանդման գործընթացում

Մանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն միջառարկայական կապի ավելի քան 30 ձևավորված սահմանումներ: Ըստ Ի. Դ. Զվերևի և Վ. Ն. Մակսիմովի , Կրթության ժամանակակից գործընթացների զարգացման և ճանաչողական գործունեության իրականացման գործում ամենակարևոր գործոնը միջառարկայական կապն է : Այն ցուցաբերում է բազմակողմանի ազդեցություն կրթական գործընթացների վրաե[3]: Ջ. Լոկը կարծում է, որ ուսումնական գործընթացում մի առարկան պետք է հարստացվի մյուս առարկաների տարրերով[4]: Պրոգրեսիվ մանկավարժները՝ Յ. Ա. Կոմենսկին[5], Կ. Դ. Ուշինսկին, Ն. Կ. Կրուպսկայան ընդգծում էին ուսումնական առարկաների միջև միջառարկայական կապերի անհրաժեշտությունը՝ բնության մասին գիտական և ամբողջական պատկերի, իրական գիտելիքների և ճիշտ աշխարհընկալման ձևավորման գործում: Այս համատեքստում բացահայտվում է նաև բնությունիհասարակություն-մարդ միասնությունը: Միջառարկայական կապերը համարվում են ուսումնական գործընթացի դիդակտիկական պայման և միջոց, հետապնդում են նպատակ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, միջոցներ և ձևեր՝ գիտության խորը և բազմակողմանի ուսումնասիրման, գիտելիքների խորացման, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, գիտական աշխարհայացքի ձևավորման, տրամաբանական մտածողության զարգացման համար: Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը կարող է ապահովվել հետևյալ միջոցներով.

1) հարցերի շարադրում,

2) առանձին առաջադրանքների հանձնարարում,

3) պրոբլեմային իրավիճակների ստեղծում,

4) ճանաչողական առաջադրանքների կատարում,

5) փորձարարական և հետազոտական բնույթի վարժությունների լուծում:

Սրանցից յուրաքանչյուրը դոմինանտ դեր ունի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում: Միջառարկայական կապերը դասակարգվում են.

[3] https://vuzlit.com/722689/integratsiya_predmetov_sovremennoy_shkole_pedagogicheskoe_yavlenie
[4] https://www.wikidata.org/wiki/Q15987216
[5] https://vuzlit.com/722689/integratsiya_predmetov_sovremennoy_shkole_pedagogicheskoe_yavlenie

1. ըստ բաղադրության՝
   - բովանդակային-տեղեկատվական,
   - օպերացիոն,
   - մեթոդական,
   - կազմակերպչական,
2. ըստ ուղղվածության՝
   - միակողմանի,
   - երկկողմանի
   - բազմակողմանի,
3. ըստ ֆունկցիաների՝
   - մեթոդական ֆունկցիա (այս հիմքով է հնարավոր աշակերտների մոտ ձևավորել բնության նկատմամբ դիալեկտիկա-մատերիալիստական հայացք, ժամանակակից պատկերացումներ նրա միասնականության և զարգացման մասին, քանի որ միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս արտացոլելու բնության ճանաչողության գործընթացում մտքերի և մեթոդների ինտեգրացումը),
   - կրթական ֆունկցիա (սրա օգնությամբ հնարավոր է ձևավորել այնպիսի որակական հատկություններ, ինչպես համակարգվածությունն է, ըմբռնումը, ճկունությունը, գիտելիքների ընկալման խորությունը),
   - զարգացնող ֆունկցիա (սա մեծ դեր ունի աշակերտների համակարգված և ստեղծագործական մտածողության, նրանց ճանաչողական ակտիվության, բնության նկատմամբ հետաքրքրության և ինքնուրույնության ձևավորման գործում),
   - դաստիարակող ֆունկցիա (սա օգնում է կենսաբանության դասավանդման գործընթացում աշակերտների համակողմանի դաստիարակմանը),
   - կոնստրուկտիվ ֆունկցիա (սա ամբողջացնում է ուսումնական նյութը, դասավանդման մեթոդներն ու ձևերը): Միջառարկայական կապերի բոլոր ֆունկցիաների արդյունավետ և միաժամանակյա կիրառումը հնարավոր է իրականացնել ինտեգրված դասերի միջոցով:

Մեկ այլ ձևակերպմամբ «Միջառարկայական կապերը» մանկավարժական հասկացություն է, որը կապ է հաստատում իրականության օբյեկտների, երևույթների և գործընթացների միջև՝ համադրելով ներառական կապերը, որոնք իրենց արտացոլումն են գտել ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության,

ձևերի և մեթոդների մեջ, իրականացնում են կրթող, դաստիարակող և զարգացնող գործառույթներ: Միջառարկայական կապերի, դրանց բովանդակային հիմքի և կառուցվածքային բաղադրիչների դիդակտիկական գործառույթների վերլուծության հիման վրա անցկացված հետազոտությունների, դպրոցի ուսուցիչների և բուհերի դասախոսների աշխատանքի փորձի ուսումնասիրությունների արդյունքում որոշվել են միջառարկայական կապերի իրականացման հիմնական ուղղությունները.

• համաձայնեցում ըստ ուսումնական առարկաների ուսումնասիրման ժամանակի,

• ընդհանուր հասկացությունների, օրենքների և տեսությունների ձևա- վորման մեջ հաջորդայնության ապահովում,

• ճանաչողական գործունեության գործընթացում գիտական մոտեցման կիրառում,

• բնության երևույթների փոխկապվածությունները բացահայտող գիտելիքների միջառարկայական կառուցվածքի կազմում,

• առաջադրանքների այնպիսի համակարգի մշակում, որոնք սովորողներից պահանջում են տարբեր առարկաների գիտելիքների համալիր կիրառում: Ընգծելով միջառարկայական կապերի նշանակությունը ուսուցման գործընթացում՝ Վ. Վ. Դավիդովը նշում է, որ «Միջառարկայական կապերը մեթոդաբանական գործառույթ են կատարում…»: Ա. Վ. Ուսովան միջառարկայական կապերի գործառույթների շարքին է դասում «ուսուցման ուղղվածության գիտականության և գործնականության բարձրացումը, գիտելիքների համակարգվածության ապահովումը, սովորողների ուսումնաճանաչողական գործունեության ակտիվացումը»: Հիմնավորվել է, որ ժամանակակից դպրոցում ուսուցման բովանդակության մեջ միջառարկայական կապերի գործառույթները պետք է՝

• ներկայացնեն գիտական գիտելիքներ աշխարհի միասնական գիտական պատկերի կառուցվածքում՝ հաշվի առնելով բնագիտական տեսությունների զարգացման պատմությունը և գիտակցելով գիտական գիտե- լիքների էվոլյուցիոն գործընթացը,

• առանձնացնեն ընդհանուր գիտական տեսություններ, օրենքներ և հասկացություններ՝ բնագիտական առարկաների համակարգում դրանց համապարփակությունը ցույց տալու համար,

• ձևավորեն սահմանակից առարկաների համար ընդհանուր տեսական գիտելիքներ, իմացական կարողություններ:

Միջառարկայական կապերի բազմակողմանի կիրառումը և դրանց միջոցով սովորողների կարողունակությունների զարգացումը այսօր անհրաժեշտություն է դարձել և բխում է հանրակրթական պետական նոր չափորոշչի պահանջներից[6]:

Ընդհանուր դրույթներ

- ✓ Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:
- ✓ Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն:
- ✓ Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:
- ✓ Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:
- ✓ Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը

- ✓ Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով կարողունակությունների ձևավորմանը, ներկայացված է բովանդակության բաղադրիչներով, ուսումնական բնագավառներով և որոշակիացվում է ուսումնական առարկաների ծրագրերում: Հանրակրթական

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ ուսումնական բնագավառների ուղղվածությանը համապատասխան առարկայական չափորոշիչների, ծրագրերի միջոցով և սույն չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

- ✓ Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

1) գիտելիք.

2) հմտություն.

3) դիրքորոշում.

4) արժեքային բաղադրիչ:

Հանրակրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է հետևյալ ուսումնական բնագավառներով՝

- ✓ հայոց լեզու և գրականություն. կրթության բովանդակության տիրույթ է, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզական-պատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում.

- ✓ հայրենագիտություն. կրթության բովանդակության տիրույթ է, որն ապահովում է հայրենի պատմաաշխարհագրական միջավայրի, հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքի իմացություն,

ազգային ինքնության զարգացմանը միտված էական հատկանիշների, ազգային նյութական և հոգևոր արժեքների, հայոց եկեղեցու և նրա դավանանքի ճանաչում ու արժևորում, քննադատական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացում.

Հայոց պատմություն առարկայի բովանդակությունը համապատասխանում է.

● գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներն օգտագործելով վեր հանել հայ ժողովրդի պատմական անցյալը և դրա դերակատարումը համաշխարհային պատմության մեջ:

● զարգացնել սովորողի մոտ ազգային-պետական արժեքային համակարգը, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացու

● ձևավորել հարատև ուսումնառող քաղաքացու և անձի, ով կկարողանա անդադար փոփոխվող արդի աշխարհում ինքնահաստատվել

● սովորողը վեր է հանելու այն խնդիրները, որի հետ առնչվում է առօրյայում և հիմնվելով ձեռք բերված ուսումնական փորձառության վրա գտնել լուծման նորարար եղանակներ:

● Դասընթացը կազմակերպվի մի շարք այլ գիտակարգերի ի մասնավորինս հասարակագիտական առարկաների հետ սերտ համագործակցության շրջանակներում[7]:

[7] https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf

Գլուխ 2. Ներառարկայական և միջառարկայական կապերի կիրառումը պատմության դասավանդման ընթացքում

Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը մանկավարժության համար նոր հիմնախնդիր չէ, և խնդրի լուծումը մշտապես հիմնավորվել է փիլիսոփայական հայացքներով, տարբերակված գործընթացի և գիտական կարողությունների ու հմտությունների ինտեգրման այս կամ այն աստիճանի ընդհանուր զարգացման ընթացքում: Գիտելիքների փոխանցման խնդրին, սովորողների կարողությունների ձևավորմանը, դրանց համադրմանը և նոր իրադրության մեջ կիրառելուն նվիրված են մի քանի մանկավարժների հետազոտություններ: Այսպես, Վ. Ն. Մակսիմովայի կարծիքով միջառարկայական կապերի բարեհաջող իրականացումը դրականորեն է ազդում ուսումնական գործընթացի վրա և նպաստում ակտիվ ձևերի կազմակերպմանը: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով և տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրությամբ[8]:Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ողջ ուսումնական գործընթացը կառուցվում է միջառարկայական կապերի հիման վրա: Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտության հիմնավորման համար բերում են հետևյալ փաստարկները. ,Որպես մեկ ամբողջականություն՝ տարբեր առարկաների շնորհիվ նյութի ուսումնասիրման հնարավորությունե Սովորողների մոտ աշխարհի համապարփակ և գիտականորեն հիմնավորված տեսակետկառուցելու համար ,Հայագիտությունե բնագավառում ներառվել են նաև ընդհանրական խաչվող հասկացություններ: Դրանք հասարակագիտության տարբեր ոլորտները կապելու միջոց են, քանի որ կիրառվում եմ հասարակագիտության և բնագիտության բոլոր ճյուղերում: Խաչվող հասկացությունները կազմակերպչական հենք են հանդիսանում հասարակագիտական և բնագիտական տարբեր առարկաներից ստացված գիտելիքները կապակցելու համար:

Ընդհանրական խաչվող հասկացություններն են՝

- անհատներ և հարաբերություններ
- կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ
- անհատական և մշակութային արտահայտում

[8] http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Eloyan_Narek.pdf

- գիտատեխնիկական նորարարություն
- գլոբալիզացիա, կայունություն և փոփոխություն
- արդարություն և զարգացում
- օրինաչափություն
- պատճառ և հետևանք
- համակարգեր
- կառուցվածք և գործառույթ

Միջառարկայական կապերի և առհասարակ առարկաների ինտեգրումը հստակ երևում է առարկայական ծրագրերի հասկացությունների վրա հիմնված դասավանդման կառուցման ժամանակ: Մասնավորապես պատմության ծրագիրը կառուցվել է հետևյալ չորս հիմնական հասկացությունների շուրջ.

1. Պետություն,

2. Ինքնություն,

3. Մշակույթ,

4. Համակեցություն

Մեր ժամանակների կարևորագույն առանձնահատկություններից է տարբեր գիտությունների գաղափարների և մեթոդների ինտեգրումը: Տնտեսական, էկոլոգիական,սոցիալական պրոբլեմները լուծելու համար անհրաժեշտ է ինտեգրացիոն համակարգչային մոտեցում:Ներկայումս կա բազմաթիվ հրատապ խնդիրներ որոնք կապված են հասարակության և տարբեր բնագավառների հարաբերությունների հետ:Նրանց միջև գոյություն ունեցող կապերը վերլուծելիս խաչասերվում պատմությունը ֆիզիկայի ,քիմիայի կենսաբանության, մաթեմատիկային,գրականությանը և այլն:

Միջառարկայական և ներառարկայական կապերը ժամանակի դպրոցական կրթության կարևորագույն սկզբունքներն են, որոնք նպաստում են սովորողների գրտելիքների համակարգմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի միասնականացմնը:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացվում են մեթոդաբանական, կրթական,զարգագացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթները:

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու,ստեղծագործելու կարողությունների ձևավորմանը: Այդ պարզ պատճառով հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր

ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

Միջառարկայական կապեր իրագործվում են և՛ դասի ընթացքում, և արտաժամյա պարապմունքների և էքսկուրսիաների ընթացքում նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները հումանիտար առարկաների ուսուցումը այդ ժամանակ հենվում է նաև աշխարհագրության,կենսաբանության, ֆիզիկայի դասընթացների, առարկայական կապերի և սովորողների մասնագիտական պատրաստության վրա:Հետևապես միջառարկայական կապերը ուժեղացնում են բոլոր դիդակտիկական սկզբունքների դերն ուսուցման իրական գործընթացում՝ օգտվելով կրթույան հաջորդականության սկզբունքից:

Հետևաբար երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը,ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը,դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար:Միջառարկայական ներառարկայական կապը աշակերտի համար համարվում է դաստիարակությանը խթանող միջոց :

Ցանկալի արդյունքի համար ուսուցիչը պետք է կարողանա դասավանդման ընթացքում կիրառել մի քանի մեթոդներ:Մեթոդի կիրառումը մեծ նշանակություն ունի դասապրոցեսի ճիշտ կազմակերպման,նյութի հեշտ ընկալման և վերջնարդյունքների բարձր մակարդակի ապահովման գործում: Ուսումնական մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը, դերն ու նշանակությունը:

Ես կարծում եմ, որ աշակերտների բազմակողմանի զարգացման և լայն մտահորիզոն ձևավորելու գործում կարևոր դեր է կատարում միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովվումը: Դրա շնորհիվ ուսուցիչը երեխայի մոտ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը: Պատմության ցանկացած դաս անհնար է կազմակերպել առանց ներառարկայական և միջառարկայական կապերի,ուստի ուսուցիչն անընդհատ ինքնազարգացման մեջ է: Միջառարկայական կապ ստեղծելը ուսուցչի տրամաբանական կարողությունների շնորհիվ է կատարվում

և յուրաքանչյուր ուսուցչի պարտավորությունն է զարգացնել աշակերտի տրամաբանությունը, երևակայությունը և հետաքրքրասիրությունը:

Իմ կարծիքով միջառարկայական և ներառարկայական կապերը ժամանակի դպրոցական կրթության կարևորագույն սկզբունքներն են, որ նպաստում են սովորողների գրտելիքների համակարգմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի միասնականացմանը:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացվում են մեթոդաբանական, կրթական,զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթները: Միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի: Այն պետք է դառնա միջոց հիմնական նպատակին հասնելու համար, այն պետք է զուգակցվի ուսուցման պրոցեսում ընդհանուր և դասական ձևերի հետ:

Միջառարկայական և ներառարկայական կապերի գործադրման կան մի շարք եղանակներ, որոնք հնարավորություն են տալիս դասն առավել արդյունավետ դարձնել:

- ✓ Ներառարկայական կապեր:

Այն ինչ աշակերտները անցել են նախորդ դասերին կամ ուսումնական նախորդ տարիներին հետևողականորեն պետք է կրկնվի, ամրապնդվի դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ:

Օրինակ՝ երբ երեխան 9-րդ դասարանում անցնում է Հայաստանի 3-րդ Հանրապետության հռչակումը պետք է հիշեցնել տարեսկզբին անցած 1-ին և 2-րդ Հանրապետությունների հռչակումները:

Մյուս կարևոր եղանակը ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման պրոցեսում:Բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք երեխան ձեռք է բերել պետք է հմտորեն օգտագործել ուսուցման պրոցեսում: Օրինակ՝ պատճառահետևանքային կապերի կիրառումը:Ցանկացած պատմական իրադարձություն պետք է վերլուծել՝ ելնելով պատճառահետևանքային կապերի բացահայտումից:

9-րդ դասարանում 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում տիրող ներքաղաքական վիճակի վերլուծությունը կատարում ենք միայն 8-րդ դասարանում անցած ազգային ավանդական կուսակցությունները կրկնելուց հետո: Սա նպաստում է աշակերտի մոտ ամբողջական պատկերացման ձևավորման, թե ինչու 19-րդ դարի վերջին հայ ազատագրական պայքարը թևակոխեց զինված փուլ:

Ներառարկայական կապերի միջոցով ուսուցիչը կարող է հայոց և համաշխարհային պատմությունների միջև գտնել հասկացություններ, որոնք կարող է համեմատել, գտնել դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները:

Հասկացությունների համեմատություն

միապետություն	հանրապետություն



Մեկ այլ օրինակով հայոց և համաշխարհային պատմություններում կարող ենք համեմատել հայերի ցեղասպանությունը(1915) և հրիաների հոլոքոստը(1939-45):Այս երկու դեպքերում էլ իրականացվել է տարբեր ազգերի նկատմամբ բռնություն,տեղահանում, էթնիկ զտում,կոտորած և մշակութային ոչնչացում:

Անհնար եմ համարում ցանկացած առարկայի դասավանդումը առանց միջառարկայական կապերի կիրառման:Դա ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել պատմության դասերին,պատմության միջոցով, պատմության միջնորդությամբ:Չկա առարկա, որը փոխկապակցված չլինի պատմություն առարկայի հետ: Աշակերտներին շրջապատի աշխարհի մասին հնարավորինս բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար:




Ռաֆֆի <<Սամվել>>,
<<Խենթը>>,
<<Սասունցի Դավիթ>>
Պատմություն
Աշխարհագրություն
Ա . Շիրակացի
<<Աշխարհացույց>>,
Պատմություն
Հասարակագիտություն
Հասարակական-
քաղաքական կապ
Իշխանությունների
տարանջատում
Հայոց պատմություն
ՀԵՊ
Եկեղեցական համակարգի
ազգապահպան դերն ու
նշանակությունը
Հայոց թեմերն ու
աթոռանիստերը

Րաֆֆին <<Սամվել>> պատմավեպում արտահայտիչ դարձնելու համար հայրենասիրության դրսևորումը գլխավոր հերոսին մղում է ոճրագործության և Սամվելը սպանում է իր հարազատ հորն ու մորը:Այստեղ նպատակը երեխաներին ծնողների նկատմամբ նման արարքի դրդելը չէ,այլ պատկերավորման միջոցով ժողովրդի մեջ հայրենասիրության սերմանումն է: Րաֆֆին իր պատմավեպը գրել է այնպիսի ժամանակաշրջանում՝ 19-րդ դարի վերջ, երբ ֆիդակայան շարժումը մարում էր, համաժողովրդական ապստամբության գաղափարը իրականություն չէր դառնում:Վեպի հերոսի նմանատիպ քայլերը զինված ապստամբությունը իրականություն դարձնելու նպատակ ունեին: Հայ գրականության հետ միջառարկայական կապի միջոցով աշակերտները լիարժեք պատկերացնում են Րաֆֆու պատմավեպի գլխավոր գաղափարը:

Ա.Շիրակացու <<Աշխարհացույց>> աշխատությունը,որը իր թարմությամբ հստակ տեղեկություններ է հաղորդում մեզ Հայաստանի շրջանների, նահանգների և գավառներ սահմանների մասին:Աշխարհագրության հետ կապը այս աշխատության շնորհիվ ամրապնդվում է:

Իմ կարծիքով ներառարկայական և միջառարկայական կապի ակնառու տեսակներից է գրականության և պատմության կապը, որը նպաստում է պատմական նյութի խորքային իմացությանը, դասը դարձնում է ավելի բովանդակալից և հետաքրքիր:

Կարևոր նշանակություն ունեն հանգուցային բառերն ու բառակապակցությունները, պատմականի և ներկայի համաժամանակյա քննությունը, պատմական հիշողությունները, պատմականի և գեղարվեստականի խաչաձևումը և պատմականի ու գեղարվեստական արժևորումը:

Գրականության և պատմության միջառարկայական կապը կարելի է ստեղծել պատմավեպի ուսուցման ժամանակ:ՈՒսուցիչը նախ պետք է աշակերտներին բացատրի պատմավեպի հիմքում ընկած պատմական ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական վիճակը, պատմական միջավայրի առանձնահատկությունները:Այնուհետև նշելով պատմական այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը, ուսուցիչը պետք է բացատրի,որ պատմավեպ գրելիս գրողը,ինչպես նշում է Մուրացանը, չպետք է դառնա պատմական փաստերի պատճենահանողը:Գրողը հենվելով պատմիչների արձանագրած պատմական

փաստերի վրա,պետք է ստեղծագործական երևակայության արդյունքում ստեղծի գեղարվեստական ստեղծագործություն,որտեղ կարող են առկա լինել սյուժետային այնպիսի դրվագներ,որոնք չկան պատմական վկայություններում:Պատմական հերոսները,թրծվելով գրողի ստեղծագործական երևակայության քուրայում,դառնում են գեղագիտորեն,հոգեբանորեն ավելի ընդգծուն կերպարներ: Պատմական փոքրիկ փաստը կարող է գրողի մոտ դառնալ ավելի խորը պատկերային միջավայր,որտեղ հերոսների ներաշխարհը,հույզերը,հոգեբանական բարդ անցումները առավել խորն են բացահայտում հերոսի մարդկային նկարագիրը,աշխարհայացքը, նրա արժեհամակարգը:

Քիմիայի,երկրաչափության,արվեստի կապը պատմության հետ կապը առավել ուսանելի է 6-րդ դասարանում <<Հին Եգիպտոս>> թեման ուսուցանելու ժամանակ:Հմուտ և արհեստավարժ ուսուցիչը միջառարկայական կապեր կարող է ստեղծել նաև պատմության և ճշգրիտ գիտությունների միջև համաշխարհային պատմությունից անցնելով հին աշխարհի 7 հրաշալիքները օգտագործի նաև երկրաչափական պատկեր բուրգը:Քիմիայից նախնադար հասարակության մեջ ներկայացնի և բրոնզի և պղնձի և երկաթի քիմիական հատկությունները այսպիսով աշակերտին տա կայուն և խորը գիտելիքներ ձևավորելով ապագայի համար զարագացած և բանիմաց քաղաքացի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով << Ներառարկայական և միջառարկայական կապերը պատմության դասավանդման գործընթացում>> հետազոտական թեման հասկանալի դարձավ,որ

- գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է:
- Սովորողներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ Բազմակողմանի,ընդարձակ տեղեկություններ տալը ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը, կարևոր ու վճռող նշանակություն ունեն երեխաների աշխարհաճանաչման համար:Եվ սրա միջոցով զարգանում է երեխաների մոտ ճանաչողական ակտիվությունը ,երևակայությունը, նրանք սովորում են քննարկումներ,հարցազրույցներ վարել պնդել իրենց տեսակետը,փաստարկներ բերել դրանով նաև աշակերտն հասնում է ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների,փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը, ինչը խթանում է սովորողների ճանաչողական ստեղծագործական գործունեությանը:Իսկ քանի,որ այս ամենը կապված է պատմության հետ, այն ուսուցչի ինքնազարգացման միջոց է, իսկ աշակերտի համար ձևավորում է վերլուծական միտք,բացահայտում պատճառահետևանքային կապերը, գնահատում պատմական գործչին տվյալ պատմական ժամանակաշրջանում, ստեղծելով տրամաբանական մտածողություն:

Պատմությունը սոսկ թվերի ու փաստերի գիտություն չէ, իսկ ով հակառակն է կարծում նա առնվազն մոլորության մեջ է: Պատմության բարձրակարգ դասապրոցես ապահովվելու համար մենք պարտավոր ենք կիրառել ներառարկայական և միջառարկայական կապեր: ՈՒսուցիչը ունի ներառարկայական և միջառարկայական հաղորդակցություններին իրականացման ձևերի, մեթոդների և տեխնիկայի բավականին մեծ ընտրություն: Կարևոր է միայն հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները, պատրաստվածության մակարդակը և մշտապես պահպանել նրանց հետաքրքրությունը՝ բացահայտելու այդ հարաբերությունները: Տեղեկատվությունը նույնպես պետք է ուշադիր ընտրվի այլ առարկաներից՝ նկատի ունենալով, որ այլ լրացուցիչ տեղեկությունները չեն

ծանրաբեռնում դասերը և <<չեն մթագնում>> պատմության դասավանդման նյութի բովանդակությունը:

Ներառարկայական կապը ուղեկցվում է համատեղ ակտիվ աշխատանքով և սերտ ստեղծագործական փոխազդեցությամբ ուսուցչի և աշակերտների միջև,որի հիման վրա կարելի է հասնել եռյակ նպատակի՝ կրթել,զարգացնել և կիրառել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանուկյան Ս. Մանկավարժական և աշակերտական դասանպատակները. Երևան 2003:

2.https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

3. https://fliphtml5.com/fumf/yayr/basic

4. https://escs.am/am/news/6929

5. https://ampop.am/war-and-history-education-in-schools/

6. https://hy.wikipedia.org/

7.https://vuzlit.com/722689/integratsiya_predmetov_sovremennoy_shkole_pedagogicheskoe_yavlenie